

# Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(Քննադառական փորձ)

Քառորդ դարից աւելի է անցել այն օրից, երբ իր վերջին շունչն էր աւանդում վշտարեկ ու հեղամրմունջ Պէշիկթաշլեանը՝ հայոց սակաւթիւ խսկական բանաստեղծներից մէկը։

Հայոց գրականութեան տեսակէտից հետաքրքիր է, ի հարկէ, թէ բնչպէս է ծնուել, զարգացել ու բեղմնաւորուել եղբայրութեան երգիչ այդ բանաստեղծը, սակայն դժբախտաբար մեզ չը յաջողուեց հակառակ երկար խուզարկութեանց գըտնել նրա հանգամանօրէն մանրապատում կենսազրութիւնը։

Վերև յիշած պատճառով ներկայ ուսումնագրութեան մէջ ստիպուած ենք անտես առնել բանաստեղծի կենսագրութիւնը և բաւականանալ միայն նրա գրքերով։

Պէշիկթաշլեանի երկերը տպուած են Պօլսում 1870 թ. հետեւեալ պարզ վերտառութեամբ. «Մատենագրութիւնք Մ. Պէշիկթաշլեանի»։ Սակայն այս հրատարակութիւնը ներքին շատ պակասաւոր կողմերի հետ ունի նաեւ արտաքին այն թերութիւնը, որ ամբողջական չէ։ Հարեւանցի գրած յառաջաբանում հրատարակիչը գրում է. «Մ. Պէշիկթաշլեանի գործերը ցան և ցիր ինչ որ գտանք այս հատորիս մէջ բովանդակեցինք»։ որից պարզ երեւում է, որ թերեւս կարելի էր այլ ոտանաւորներ եւս գտնել բանաստեղծի ազգականների և մօտիկ ծանօթների քով։ Այս առաջին և միակ հրատարակութիւնը պարունակում է իր մէջ 63 մեծ և փոքր ոտանաւորներ, և ճառ՝ նուիրուած եղբայրութեան ու լուսաւորութեան գաղափարին և 8 թատերական գրուածքներ։ Շատ ցանկալի է, որ բանիմաց մարդիկ թիւրքիայի պարբերական հրատարակութիւններում մէջ ընդ մէջ լոյս տեսած ոտանաւորները հաւաքելով, ըստ կարելոյն մի լիակատար ժողովածու ընծայէին մեզ։

Գէմիթաշլեան հայոց քնարերզու բանաստեղծներից է և  
որպէս քնարերզու նա, անշաւա, երգու պիտի լինի բնութիւնը,  
սէրը, մանը, գէտի մարդկութիւնն ու հայրենիքն ունեցու ան-  
հատական զգացումը, Գէմիթաշլեանի տղնիւ, հոգեսպարար քնա-  
րի մեղմիկ դալալլիկների մէջ դուք չեք նկատի ոչ մի յախռան,  
շափազանց խօսիս յուզում, զգացմունքների արտակարգ զե-  
զում, չեք գտնի ոչ մի զու բողոք, խիստ թափով ու զօրեզ շնչ-  
տով արտայայտուած անրաւականութիւն, փոթորկալից երգեր,  
գէտի բնութիւնն ու առ կոյսը տաճած ոչ մի անսանձ, կրակու  
սէր, որ գիտէ քանդել, այրել, առապալել, ոյլ ամեն ինչ նրա  
քնարի լարերի վրայ ստանում է մեղմիկ, համեստ ու շափառ  
ձեւ, ամեն բան զրաւիչ, բայց ոչ այրող, սիրելի, անուշ, բայց  
ոչ մոլեգին և արքեցնոց Գէմիթաշլեանի քնարը տալիս է հո-  
գեկան բաւականութիւն, առանց մարզու ներքինը տակն ու  
վրայ անելու յարուցանում է մարզու մէջ զգացմունքներ, առ-  
անց կրբերի կնճառ ընդհարումներ տառջացնելու:

Գէմիթաշլեան իր հոգու հակումներով և խառնուածքի  
ինքնուրույն կողմէրով հակամէտ է բնութեան մեղմիկ, քնչոչչ  
կողմնը սիրելու, նա սիրում է ոչ փոթորկալի, անեղաւունչ,  
ամեն ինչ բարուքանդ անող, սոսկալի բնութիւնը, նա հիանում  
է, պահնանում ոչ զայրացած ու մանչացող բնութեամբ, ինչ-  
պէս անզիւական մնածադրյան բանաստեղծ ըմրոստ Բայրօնը, այլ  
հանգարատիկ, հեղ ու ժպտուն, կճնունակ ու ծիծաղկուա ըլր-  
ջապատճ է, որ նրան քաշում է, զրաւում, որ նրան բնութեան  
ջերմ երկրապագու է դարձնում բնութեան շունչ՝ անեղամունչ  
հողմն ու քամին, մրրիկն ու փոթորկիը, որ շատ շատերին զբլ-  
իից հանել է, որով շատերը ոգեւորուել, հիանալի տողեր են  
զրել, Գէմիթաշլեանի համար զրաւիչ է դանում միայն այն  
ժամանակ, երբ փախուում է հեղիկ, հանգարատիկ զեփիւուի կամ  
զովացուցիչ հօմիկի, նրա երեւակայութիւնը իր սիրած երեւոյթ-  
ները կերպարանաւորում, անձնաւորում է, հոգի ու շունչ է  
դնում նրանց մէջ, խօսում է նրանց հետ, հիանում, ոգեւոր-  
ում է, ու կարօտակեց սրտով բացականչում է.

Դու փափկաթե մանկիկ զեփիս,  
Աղբերց վրալին լուսակարկան  
Անուշ հոտով ծաղկանց ըսփիս  
Խնչուց թռչիս ինձ ընդ առաջ,  
Ու խունկ ու զով ընծոլելով  
Զիս ողջունես հեղիկ շնչով,

Այդ մեղմ հովիկը բանաստեղծի համար փափկիկ սուր-  
համդակ է դառնում, որ լուր է տանում հովախն ու ծործորին,  
բարձրագիտակ անսառներին, երամ երամ՝ ստիւկներին, լուր է  
տանում նոցա, նրանց իմացնում է.

Թէ մըտերիմ իրանց եկաւ  
Բիւր ըզմալմանց իշշատակաւ

Տեսէք ինչքան զրաւիչ ու ներդաշնակ գունեղ պատկեր-  
ներ է տալիս «Գարուն» հրաշակերտ ոտանաւորի մէջ:

Ո՞հ, ինչ անուշ և ինչպէս զով  
Սռաւօտուց փշես հովիկ,

Ծաղկանց վրայ գորգուրալով  
Ն մաղերուն կոսիին փափկիկ...

Ո՞հ, ինչ աղու և սրտագին

Տառոց միջէն երգես թռչնիկ.

Սիրոյ ժամերն ի լանտառին

Ըզմալեցան ի քո ձայնիկ...

Ո՞հ, ինչ մրմոնջ հանես վրտակ

Ականակիւտ և հանդպատիկ.

Քու հալեւուդ մէջ անապակ

Նային զիրենք փարդն ու աղջիկ...

Եթէ կարելի է և պէտք է հիանալ բնութեան խորհրդա-  
ւոր ու հրաշալի տեսարանով զիշերը - Պէշիկթաշլեանին ահա  
թէ որ զիշերն է գրաւում:

Պարապի խաղալ և անգորր ժամ է, տիեզերքն ամբողջա-  
պէս սեւաթոյր քօղով պատած, խաշինքն ու արօս խոր թմբրի  
մէջ են. դալար սոսերի վրայ հոնգստանում են թռչնիկները.  
մութը, որպէս անձնաւորեալ մէկը, ահաւոր և սեւադէմ իշխանի  
նման բազմել էր աղջամդջի մէջ իր դիշերային աթոռը.

Լըքեալ լերինք, լըքեալ և զաշաք ամալ  
Միանութին բնակէր միան և յերկրի:

Եւ այս խոր և վիճ լոռութեան ժամին հեղիկ սիւքն էր, որ  
վէտ ի վէտ ծածանուելով, վարդ ծաղկանց խնկաւէտ անոյշ  
բուրմունքը ծաւալում էր խաղաղական օղի մէջ և միւս կողմից  
զիշերախօսիկ երգիչ թռչնակն էր, որ այս բնութեան ժամին,  
մարդկանց թարգման լինելով, մեղմիկ դայլայլիկներ էր գեղգե-  
ղում: Սակայն զիշերուայ արենաչքնաղ տեսարանը երկնքում  
պէտք է փնտուել, ուր և ուղղում է ապշած բանաստեղծի որո-  
նող հայեացքը, նա տեսնում է ջահազգեստեալ, եթերածեմ կա-  
մարում, ինչպէս

Նրծաթափալ դըշլոյն ի զահ բոցակէզ  
ձեմէր դաշտին լայնոծաւալ լասպարէզ:

Նա հոգեղուարձ պշտոթեամբ եթերին նայելով հրանում  
է երկնքի մշտամրմունչ բազմաշնայ քնարներով. երիխանին  
լուսազգեաց էակների աստուածային մին փառաց նառագոյթ-  
ների շողերով. աինդերը անհուն, անհամար աչերի փայլմունք-  
ներով-աստղերով. Ասողերն եւս, ինչոքս լուսին ու արեւը և  
այլ բնական երեւոյթներ և մարմիններ, անհաւոր են բանա-  
տեղծի երեւակայութեան մէջ:

Յարշաւասը լուսաշարից չէր ի մեջ  
և մեզ զանձան ձնունդս երկրի նըկտուն:

Եւ բնութեան այս փառանեղ հրաշալի ու խորհրդաւոր  
տեսարանի տաղ կանգնած է բանաստեղծը վերամրարձ պը-  
նեալ հայեացքով:

Ցոյց տալու համար, թէ բնութեան որ տեսարաններն են  
նրան զրաւում, բնութեան որ մասնաւոր նրա ու քը կաշկան-  
դում, արտագրում ենք այստեղ «Աշուն» ոտանաւորի ա. մասը,  
որի մէջ, նկարագրուում ու փառարանում է աշունը Այդ ոտա-  
նաւորը Պէտիթաշլեանի զեղեցկագոյն ոտանաւորներից մէկն  
է, ահա դա.

Ո՞ւր էք ձազկանք զուք փալլիքը լունք  
Ո՞ւր ձեր արտեր անուշ հոտով,  
Ո՞ւր ձեր պշրանք ու փափկութիւն  
Եւ ծոց լցեալ շաղ մարզարտով.  
Խնչու համիկ, անզութ համիկ  
Ցորս համբուլներ կուտայ ձեզի.  
Ռոգան արդեօք իւր սէր զոդորիկ  
Եւ իւր զգուանք փարփարիլի:  
Ո՞ւր թիթեռն իկ հոլաթեան  
Ճեր բաժակին հիթոց կարօն,  
Որ զալր թերթից ձերաց զունիան.  
Տանել զրոյր հետի և մաս:  
Ա՞հ, ուր սոխակ իմ սիրակէզ,  
Որ տերեաց նստած ի շուք  
Հալէր կարմրիկ փարզին ի տես  
Եւ կողիողէր սրտամաշուք:  
Ճկալ զեփիւս, չկալ ձազիկ  
Եւ ձազկաստարփ չկալ թիթեռ.  
Ճկալ սոխակ, ոչ փարզենիք  
Լցեալ ցօղով մարզարտուին:

## II

Բնութեան երկրալազուն հեշտութեամբ զառնում է կոյսի  
երկրպագու, զի անոր մէջ կոյսից աւելի չբնագ, կոյսից աւելի

գեղեցիկ երեսոյթ չը կայ: Պէշիկթաշլեան, եւս նման միւս բոլոր քնարերգակ բանաստեղծների, հիանում է կոյսով և վառ գոյսերով նկարագրում է, կամ աւելի լաւ նկարում է, իր սիրեցեալի պատկերը:

Նա իր տաղերում ոչ թէ մանրամասն նկարագրում է կոյսի դիմագծերը և նրա մարմնի զանազան մասերը, այլ մեծ մասամբ տալիս է ամբողջական տպաւորութիւն և աւելի շատ կոյսի գեղեցկութեան թողած հետեւանքը, զգացումը՝ մի պատկերով դունաւորուած:

**Ահա այդպիսի նկարագիրներից մէկը.**

Անոյշ աշխոյժ կերպարան  
Շնորհաց սիրոյ բնակարան.  
Բարքով հեղիկ Աղամի  
Խօսքն մընչին գեղանի:

Պէշիկթաշլեանի ոտանաւորներից, մասնաւորապէս սիրոյ տաղերից, կարծես վարդի բուրմունք է, որ պարարում է մարդու հոսոտելիքը, աւելի շատ գոհ, ինքնարաւական ու համեստ վայելքի տրամադրութիւն, քան բողոքող, դժգոհ ու լացկան սիրային յարաբերութիւններ: Սրանից ի հարկէ չի հետեւում, որ բանաստեղծն իր կեանգում սիրոյ մէջ բախտաւոր է եղել, գուցէ և եղել է, այլ այն, որ նրա բնաւորութեան հիմնական գծերից մէկն է՝ չափաւորութիւնը, համեստութիւնը: Նա իր բախտից տրամջալուց աւելի երգում է իր մնապմիկ ուներդաշնակ ձայնով կոյսի հետ ունեցած համեստ վայելքն ու զրուանքը, կարդացէք, օրինակ, նրա լաւագոյն ոտանաւորներից մէկը, «Ճեմք ի լեան հակային», որի առաջին տունը միայն կարտագրենք ստորեւ.

Ծովըն ցոլալր և ծըֆծփալր,  
Սուրալր ակասն ի մէջ ալեաց.  
Հովն հեղաթռիչ երթալր և զայր  
Վազվրտելով ամեն դիաց.  
Բացէք հաճոլք փափոկ թևեր  
Տարէք ըզմեղ բըլովն ի վեր:

Այս ոտանաւորի մէջ արուեստի գեղեցկութիւնն ու զգաց-  
մունքի անարատութիւնը միացած դէպի բնութիւնն ունեցած և  
առ կոյսը տածած բանաստեղծի քնքոյշ ոօմանտիկ սիրոյ հետ,  
մի չքնազ պատկեր են ներկայացնում, որի նմանը խիստ հա-  
զուագիւտ է, համարեա չը կայ մեր արդի բանաստեղծների մէջ:  
Կոյսի չքնազութիւնն ու բնութեան գեղեցկութիւնը զու-  
գաւորուած են բանաստեղծի ուղեղում: Գարունը իր իսկ գար-  
նանային նշաններով ոչինչ է, եթէ կոյս չը կայ, եթէ նրա ծաղ-

կուէս զաշտերի վրայ կոյսի փափկիկ ուրիշները չեն զբանամ, իսկ աշնանն ու տարուայ ոյլ եղանակներին, երբ չը կոյ ընթեան գեղեցկութիւնը, կոյսն է գիտանակում զբանը.

Եթ ինչ պիտի ծաղկաց գունդէր,  
նորման նոր արտերն նային,  
ու ինչ պիտի վորդի հանդ,  
նորման նոր ճառ զըսնէրին.

Այս քառասուզը իր անպահայ նկարագրով բնորոշում է կոյսի գեղեցկութիւնը և զրա հետ միասին կոյսի ու բնութեան յարաբերութիւնը.

Կոյսի հետ անցկացրած ուրախ ու երջանկավայիլ ժամերը խոր արմատ են ձգել բանաստեղծի որոշում, նու իր ցաւոց անկողնում պահկած հրատաւոր կարօնն ու յատիս ողջոյն է աւզարկում կոյսին, դիմենով նրան.

...թոյլ տուր ցեսին և ալո նուազ  
Հալի ի քեզ, ուշշնող ի գեմադ և աշերուդ լուղի ի լու.  
Ի քուց խոպաս զնու ծածան, որուէս և բարտից ի փուր  
Ցեսու մեկնիլ ի նոցունց, որուակուոր մեկնիլ ի քէն,  
Ըզասակին երջանկութեան իմու ու սուրս քո եղեալ  
Զար ի քերոց ձեռանէց և ի զըսուց ես ընկարալ  
Զար պահեցի սըրտիս կրասով, ցազով աչաց սոսկեցի,  
և արդ թափար ցես ի գեղուն և լուսափթիթ կու ի թերթիցն.

Մանու ժանա երեսն ու անդնդափոս զերեզմանն անզօր  
են զուրս կորզել բանաստեղծի հոգուց կոյսի մշտակիթիթ յիշատակը, յաւիտնից խորութիւնները չը կարողացան նրան  
կոյսից անջատել երբ նա երիտասարդ հասակում ընկաւ, թուա  
նրա կենաց արեւը, նրան ստուերների, մոռացութեան և մասյ-  
լի աշխարհն իջեցրին, նրանից միշտ անխզելի էր կոյսի սէրը,  
Եւ ահա կոյսի այդ սէրն է, որ շունչ ու կմնդանութիւն  
է տուել Պէշիկթաշլեանի լաւագոյն ստանաւորներից մի քանի-  
սին, ինչպիսին են՝ երգ, Գնացէք իմ տագք, Առ նէ, ձևաք ի  
լիանն հսկային և այլն.

## III

Պէշիկթաշլեանի գէսի բնութիւնն ունեցած սէրը աւելի  
խոտանում և խորանում է, երբ նա աշքի առաջ է բերում Հա-  
յաստանի բնութիւնը, Հայոց աշխարհը, իր պատերի որրանը, և  
ահա այդտեղից նրա երկերը այլ զոյն են ստանում, ուրիշ ե-  
րանգով ներկւում, զրանք քնփոյց և մեղմիկ կերպով Հայոց աշ-  
խարհի ցաւն ու վիշտն են լալիս, բանաստեղծի սրտի կարօն

ու մորմաքը, հայրենեաց համար ունեցած նրա անձուելը. նա երգում է և երգելիս՝ լալիս, ու լաց լինելիս՝ միմիթարւում է, երեւակայութեամբ ստեղծելով տիպեր, որոնք պէտք է Հայոց աշխարհը գանկափ նորատակին հասցնեն:

Իր տաղերից երեւում է, որ Պէշիկթաշլեան Դուրեանի նման Հայաստան ուսք չէ կոփել. նրա հոգին թռչում է շարունակի իր հայրենի աշխարհը, դանկալի Հայաստանը. և այդ տենչըն աւելի զօրեղանում է գարնան ժամանակ, երբ դառնաշունչ ձմերուանից յետոյ բնութիւնը նորոգ զարդարւում, գեղածիծաղ գարունը գալիս է իր բոլոր թարմացուցիչ նշաններով ու հոգ ու զով սփուռում ամեն կողմ, ահա այդպիսի բոպէին բանաստեղծը ցանկանում է հայրենիք դառնալ, առոչինչ հաշուելով Հերուետեան զուարթ դաշտավայրը և ջնաղագեղ իտալիոյ պայծառ երիխնքը, նա գիտէ, որ Հայաստանի բնութիւնը բնոշքան էլ որ գեղեցիկ ու գրաւիչ է, զարձեալ սգաւոր ու տիրատիսի է. բայց էլի առ հայրենիքն ունեցած սիրոյ զգացմունքից երգում է, մելամաղձիկ.

Թէպէտ թռչնիկն ու հովն հայոց  
Աւերակաց շրջին վրայ,  
Թէպէտ պղոտոր վըտակն հայոց  
Նոճիներու մէջ կը սողայ,  
Նոքա հառաչք են հայրենեաց  
Նոքա չերթան սըրտէս ի բաց:

Վերջին շունչը նա կուզէ հայրենիքում աւանդել.

Գալցին աւուրք, ուր մանկութեան  
Անկցի դիուս իմ գեղ դալար  
Եւ լինէն խոյս տացեն վայելք  
Կենաց թեթև ի գարշապար,  
Ուր հէտ Մուսակս մատն ի յերեր  
Մոռանացէ երգել լղակը  
Ըղնինչ ի ծոցդ առնում յախճամ  
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

Սա առ հայրենիքն, առ աւանդական պատմական երկիրն ունեցած բնական, նոյնիսկ բնազդական սէրն է, որ սրոց չափով ամեն մարդու մէջ կայ; Սակայն Պէշիկթաշլեան բարձրանում է այդ պրոզայիկ, սովորական մակերեւոյթից և նայում է բարոյական ու մոտաւոր տեսակէտից իր հայրենիքի վրայ: Նրա աշքի առաջ կենդանի է Հայոց աշխարհի անկեալ ու թշուառ դրութիւնը,

Շատ զարերու ցաւերով  
Տրտում տիսոր ողբական  
Ի գերեզմանան նատելով  
Արցունք թափէ Հայաստան:

բանաստեղծի ցաւն աւելի շատանում է. Նրա կործեցութիւնը խօսնում է աւելի, երբ մատքերում է մեր աշխարհի անցեալը. Բայց Պէտքիթային լացկան բանաստեղծներից չէ. որպէս, յայտ ապաւէն կորչըրած, շարունակ նշանառմ են իրանց մօնուան քնարը. Սա ընդհակառակը կեանք ու կենդանութիւն է բեկում իր հետ. ցանկալի գրէարար ապազայի նևունեկարն է պատկերացնում և միջացներ առաջարկում նրան դիմուու. Նու ուրախանում է և հոգեսէն հրճւում, երբ աեսծում է հայ աշակերտուհիների առաջադիմութիւնը, երբ հայ օրիորդը երկարաւուն էնից և աւանդական սպարութիւնից զուրս է զայիս և վարժարան քայլելով՝ հայոց ապազայ յուսոյ ժողովու ու վարզը դառնում Բանաստեղծը պատրաստ է սրտառուշ կիրազով երգել «զղարձ բախարին և լուսոյ» և մնածագարի յորդոր և կարգում՝ անգին իմաստութեան ու զիսութեան ծագկաւէս մնջի հետ միասին՝ մի փունջ էլ կապել «զարկեցաւազեղ բարօյից», և զիտութիւնն ու բարոյականը. զատ միաքն ու ազնիւ սիրուր մրացած կարող են հայոց սպազատ սարերի կատարներից բառնալ խաւարի ու սղի ծածկոյթը և այն ժամանակ.

Դազրին նուազք սղբերգու,  
Սրբէ արցունքն Հարաստան,  
Զի լոյս զուարթ օրերաւ  
Աղջկունք հայոց իրան տան.  
Ո կուս, իրան մասեցէք  
Ու թագն իր զլուխը դրէք.

Իսկ այն ազու. մնայրանոյ և հանրածանօթ երկաւողը—

Ըստ աստեղօք ինչ կայ սիրան  
Քան զանձկալի եղրայր անան,

—այն վսիմ ու իդէալական բարձր իրականութիւն ունեցող և եղբայր և մը մեր նշանարանը, միթէ միակ և զիմուռ պայմանը չէ ամենայն բարեփախութեանց ու մնամոնձ մենարկութեանց:

Պօէտի զգայուն հոգին չի կարող տանել իր իսկ ազգի մէջ երկալառակութիւններ. հայը հայի դէմ սիս ու քէն ունի, հայ կաթովիկը ատելութեամբ լուսուած է զէպի իր ազգակից հայ լուսաւորչականը և ընդհակառակը. ընկերական միացեալ ոյժը չը կայ մէջ տեղում. չը կայ միահամուռ աշխատանք, յոյս ու բերկանք. նրանց չէ կապում ոչ ուրախութիւն, ոչ վիշտ, որովհետեւ չը կայ ընդհանուր բարիք ու բոլորի համար միատեսակ նշանակութիւն ունեցող ընդհանուր շաներին զիպչող չարիք. եղբայրութեան վեհ զաղափարը նրանք չեն հասկանում և մեր բանաստեղծը զգացուած ու բնարոյշ տոնով դիմում է հային.

Ցուր ինձ քո ձեռդ, եղբայր եմք մեք,  
Որ մըրկաւ էինք զատուած,  
Թախտին ամեն ուս չարանենդ  
և մի համբոյք ցրուին ի բաց:

Ո՞րքան գրաւիչ հեռանկար. միասին ապրել, մէկ տեղ յոդ-  
նել, մէկ տեղ յանել, տանջուել ու չարչարուել, լալ ու խնդալ.  
Ընկերական համերաշխ հիմքերի վրայ դնել հանրակեցութիւնը.  
մեր կեանքին նոր գոյն ու հաստատ դեկավարիչ սկզբունքներ  
տալ դա մի վսեմ զաղափար է, որի մասին մեզանում շատերն  
են զրել, որը սակայն Պէջիկթաշլեանի նման ոչ ոք այնքան  
գողարիկ ու ազգու չէ արտայայտել: Հայոց աշխարհը պէտք ու-  
նի սաստկապէս այդպիսի եղբայրութեան, որովհետեւ նրա փըր-  
կութիւնը դրա մէջ է:

Երբ ալեւոր Մալին Հայաստան  
Տեսնէ զորդին իւր քովէ քով,  
Նրտին խորունկ վէրքըն դաժան  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:

Այն, աստղերի տակ եղբայր անունից աւելի անձկալի  
բան չը կար Եղբայրութիւնն է, որի գօրութեամբ բռնութեան  
շղթաներ են կոտրատում, խաւարի ձմերային սառոյցը հալւում  
և երկնային անապակի վճիտ վտակը ճանապարհ է ստանում՝ հո-  
սել մարդկանց միջով՝ ցանելով աջ ու ձախ երկնաառաջ բարիք-  
ներ: Եղբայրութիւնը, մանաւանդ մեզ հայերիս համար, խիստ  
զգալի է, որովհետեւ վտարանքեալ ու ցրուեալ մեր ազգը խիստ  
թոյլ զաղափարական խիստ անզօր օղակներով է շաղկապուած:  
Սակայն չը նայած այդ հանդամանքին, չը պիտի վհատուենք,  
բանաստեղծը կհանքի նկատմամբ յոռետես չէ: Խաւար զիշերը,  
երբ գոյ է հրաշազան երկինքը, մի զիշեր, երբ շատերի մէջ կա-  
րող են ծնուել միմիայն յուսահատական խոհեր, տիսուր հառա-  
չանքով լի վանայ ծիածաւալ ծովի մշտափրփուր ալեաց զիմաց  
կանգնած վանայ ծերուկը բանաստեղծի բերանով մեզ աւետիք  
է կարդում.

Եւ զո՞ւ, Մեհիկ, կուլա՞ս անլոյս...  
Ո՞հ, ո՞չ, զնա... գայ Արշալուս:

Եւ առնասարակ Պէջիկթաշլեանի քնարի ամեն մի դայլայ-  
թից, նրա հոգու խրաքանչիւր հնչինից բոլորովին պարզ ար-  
տացումում է նրա այդ հանգիստ ու անխոռվ, և յուսացող զրու-  
թիւնը: Սակայն այդ արշալոյսը, ինքն իրան չի իրականաց.  
մէջ տեղ գործ է հարկաւոր, գործ և եռանդուն, անձնուէր զո-  
հաբերութիւն...

Գէյթաշալեանի ամենազեղեցիկ ռատանաւորներից մի քո-  
նիսում նա քաջութիւն է զրուառում Քաջութեան տիպուրը Նա  
վերցնում է Զէյթունի կեանքից, որ վաթուանական թուական-  
ներին այնքան հաշակուեց.

Զէյթունի անհաւասար մաքառումը հզօր Թիւրբիայի գետ  
ողեւորում է բանաստեղծին:

Զէյթունցին կարին ու անցիներ է, Մահուան բոպէին էլ  
նրա սիրան ուրախ է, ողի լուծաւ վրէժ յարեան վառէ և իր  
վրայ լացող անոյն մօրը, իր մահուան վերջին բոպէին, միբթա-  
րում է, որ իր կեանքը Զէյթունի համար է տուել.

Առհ, Հալլենիք, ի հոր ի բաց  
Քա համար մեր սիրաք վասեցան,

ու հոգին աւանդում է քաջագործ զէյթունցին իր յետին բա-  
րեան ուղարկելով սիրելիաց, չը մոռանալով նաև քրիստոնէա-  
կան վերջին պարտըը.

Վերջին համրուր տամ քեզ, մալլիկ,  
Հասուցանես զայն սիրելուս.  
Վերջին անզամ գրկեմ մեր հոգ  
Ուր արդ կիշնամ ի ծոցն անլուս.  
Խաչ մը անկէ վրա ու զան  
Արախ լուրեր տար ի մեր տուն:

Պարզ է ու անպաճոյն, բայց և ազգու ու տպաւորի քաջի  
թաղման պատկերը

Մազմական փողերի ձայնն ու մարտիկների երկար յու-  
ղարկաւոր շարքը չէ, որ ուղեկցում է քաջորդուն՝ զագազը հո-  
վին յանձնելիս, և ինչ դագաղ. ազատաւէն քաջին չնն սեղմել  
ձերմակ պատանքների ու նույ տախտակների մէջ.

Դա յես մարտին կարծես լոգնած կուհանզչէր  
Ու վերարկոն կարմիր բաւէր իր անձին:

Երա վրայ չի կատարւում ըստ պատշաճի չքիզ թաղման  
կարդը, այլ քաջ տէրտէրը մի կարծ ննջեցելոց է մրմիջում, գու-  
գում է քաջի ման ու օրհնում նրա արիութիւնը, Քաջի զա-  
գազի վրայ պսակներ և չքանչաններ չը կան, հայրենիաց հա-  
մար մեռնող դիւցազնի ճակաաի զեղն ու պայծառ վերքն էր, որ  
փայլ էր տալիս մահատիսի յուղարկաւոր խմբակին, երբ հրա-  
ցանի կոթով բացած փոսի մոռայլ գուռն ին իջեցնում մարմինը,  
փչում է ցրտաշունչ քամին, լուսինը ծածկում է իր շողերը  
մութ ամսերի տակ. Տապանի և արձանազրի փոխանակ մի  
խաչ են տնկում հողակոյտի վրայ, Քաջը մենակ է Ցոււմ իր

փառքի հետ, նա կռուեց Զէյթունի նեղ օրերում, արիւնը զոհ բերաւ և հանգստացաւ իր խոկ պատերի կրկրում \*).

Միայն զէյթունցի տղամարդը չէ, որ քաջ է, որ գիտէ կռուել ու ամեն վտանգ յանձն առնել մհծագոյն վտանգի՝ Զէյթունի տագնապի բոպէին. նրան ընկեր ու ոգեւորող է կռուի դաշտում նաև հայ քաջուհին:

Խոնչ է այն, որ կործքն սեղմէ  
— Բացանշով զրահ մի լալն.  
Խոնչ զգուանօք նա համբուրէ.  
— Ճակատամուխ երկաթն է այն:

Հայուհին իսկ՝ գագան դարձած, արիւնն աչերը կոխած, գոռ ընդդիմադրութիւն է ցոյց տալիս և փառաւոր յաղթութիւն տարած, դառնում է իր յաղթական արշաւանքից.

Այդ կոյսն աղոր ուստի կուպաչ,  
Թռուցեալ զուարթ լերանց վրան.  
— Պատերազմին նա կը դառնայ  
Հերաց վրայ դափնիք շուշան:

## IV

Պէշիկթաշլեան վարպետ է զգացմունքն և ձեւը ներդաշնակորէն արժայայտելու և իւրաքանչիւրին իր պատշաճը տալու մէջ. զրան ապացոյց կարելի է ըերել նրա ոտանաւորներից մի քանի տաներ, որտեղ պատկերանում է ընտանեկան կեանքը, յատկապէս մանկան տիպարը, որ ճշգրիտ նկարագիր է գտնում:

Մեր բանաստեղծներից քչերն են մանուկների հետ այնպէս պարզ ու մանկական ոճով խօսել. որպէս խօսել է Պէշիկթաշլեան: Մանկական կայտառն ու չարաճճի բնաւորութիւնը նրան դուր է եկել ու նա մանկան է նուիրել, թէեւ մի եր-

\*) „Փաղումն քաջորդոյն“ ըստ ամենայնի գեղեցիկ ու ներդաշնակ ոտանաւորը 8 քառասորդ տներից է բաղկացած: Նրբ թէրթում էինք ՅՈՏՈՅԵ-ի „Ընդհ. գրականութեան պատմութիւն“ աշխատութեան IV հատորը, անդիմական գրականութեան մասում, պատահմամբ նկատեցինք մի նման ոտանաւոր, որի սկզբի 4 տանը կատարելապէս նոյնն է այս ոտանաւորի սկզբի չորս տների հետ համեմատած: Միայն վերջին մասերը քիչ շատ զանազանում են. Պէշիկթաշլեան հալացրել է: Այդ ոտանաւորի հեղինակն է անզլ. պօտէ Զարլո-Վոլֆ (1791—1829) որ նշանաւոր է հէնց այդ ոտանաւորով, որի վերնագիրն է «Փաղումն Զօն Մուլիս»: Մեռնողը մի գեներալ էր անդիմական, նշանաւոր և յատնի իր քաջորդիւններով: Արդեօք քրանսերէն թարգմանութիւնից է փոխադրել Պէշիկթաշլեանը, թէ բնագրից, մեղ յատնի չէ: Մենք առաջմ հնարաւորութիւն չունենք իմանալու, թէ հարազատութեամբ որ ոտանաւորը նրան է պատկանում:

կու երեք, բայց զեղեցիկ ուսանաւորները նաև ըստ ամենալավ  
մանում է մանեկան գրաւթեան մէջ, բարձում է նրանց նուռ-  
դաշնան. Ազգը ու քննուց չափաւոր ու մասեան՝ զգացմաներները  
և պարզ երեխային մասնելիք ձեւով էլ արագայաւում է:

Ահա երեխան, թեթեւ մանեկան վիշտը հակասաբն կանգ-  
նել է. Նրա սիրոց ցաւել է. նա տիսուր է. սրովնեաւ. Նրան  
ծիրէ ծիրէ ձայնազ թաշունն այլ եւս չը կայ, լոիկ և անբար-  
բառ ընկած է ուսերի ասել: Զը կայ մշտամրժանչչ ծրվան թըոշ-  
նակը, Նրա սեւուկ աշխիները նուռազել են թերարացիկ: Սակայն  
երեխային յատուկ ձեւով՝ մանեկան վիշտը յարատեն, կայուն չէ:  
Նաև շուտով փոխում է իր տիսուր տօնը, սկսում է պարաւա-  
տութիւն տեսնել իր նազելի թունակին հոգին յանձնելու հա-  
մար: Ազօթք է անում նրա հեզ հոգու համար ու ճանապարհ է  
դնում Յիսուսի պարտէզը, որպէս զի այնուեղ ուկենինուուր  
գարդարուած, թեւապարիկ երգով Յիսուսին զմայիցնէ, ապա  
երեխայական պարզամտութեամբ աղաղակում է վազամեռիկ  
թունակին:

Յակարն խնդրեմ, անսի զարձեալ  
ծըրիկ ծըրիկ ինձ ձայնիցես:

Ո՞րքան պարզ ու բնական վիշտ, սփոփանք ու սպասելիք:  
Ահա շարաձճի փորբիկ Գոհարիկը, որ զագար ու հանգիստ  
չունի և չի տայիս տնեցոց և առ ոչինչ համարելով նուէրներն  
ու շաքարեղէնները, մանկան յատուկ քմահաձոյքով ուզում է,  
որ բոլորն էլ իր հետ խազան ու զրազուին:

Առանապակ փորբիկ մանուկը միշտ գուր է զալիս մե-  
ծերին իր վարդագոյն շրթոււկներով, կարմրիկ թշիկներով,  
բազզրազրուցիկ ժալտով, փափկիկ թաթիկով ու ձիւնափայլ  
պարանցով, հրաշագեղ գոնար աշերով, վերջապէս իր մարմին  
ու հոգու երկնային զեղով և նրանով, որ նա երեխայ է: Աշ-  
խոյժ Գոհարիկը.

Երբ որ իշնաւ պարտէզիկ  
Քաղել զվարդ կամ լասմիկ.  
Դու չես կրնար որոշել  
Ա՞վ է վարդ, ա՞վ Գոհարիկ:

#### Կառմ'

Երբ որ թաշուն ճրճըալ,  
Երբ որ վասեակ կըսկըսալ  
Դու չես զիտեր թաշունն է  
Աէ՛ նէ Դոհար, որ ձախ տալ:

Հնտանեկան խազակ և հանգիստ կեմնիքը գրաւում է մեր  
հեղիկ բանաստեղծնն նաև ուրախանում է ընտանիքի զարդ ե-

բեխայով, նրա հետ մէկ տեղ խաղ է անում ու նրա զգացմունքի թարգման հանդիսանում իր ոտանաւորների մէջ, Եթէ երեսան կարողանար ոտանաւորներ գրել, նա, երեխ, իրան՝ Պէտրկաչաշևանից աւելի լաւ չէր նկարագրի:

## V

Բանաստեղծի մէջ եղած ներքին հոգեկան ոյժն ու կարողութիւնը պարզօրէն երեւան է գալիս, երբ պօչտը հանդերձեալ կեանքի հանդիման է կանգնում, իւրաքանչիւր քնարական բանաստեղծ երգում է իր քնարի տխուր լարերով մարդկանց համար անխուսափելի պատուհասը, կամ թերեւն բարիքը, բոլորիս ճակատագրական գերջը՝ մահը, Մահն ինքն ըստ ինքեան մի բնորոշ գէպք է տիրութեան և լշտի, դա խոր ցաւի մէջ է ձգում մեռնողի ազգականներին ու սիրելիններին: Եւ քանի երիտասարդ ու արքանաւոր է մեռնողը, քանի նրա շրջապատողները գեռ շատ բան են սպասում նրանից, այնքան աւելի գդալի է լինում նրա կորուստը, այնքան աւելի խոր թողած վիշտը: Քնարական իւրաքանչիւր բանաստեղծ երգել է մահը, մէկը յուսահատ, սրտակաոր հեծեծանքով ամենամեծ չարիքն է համարել մահը մարդկանց համար, չի ուզեցել բաժանուել իր սիրած և իրան սիրող աշխարհից—դա լաւատես պօչտն է, մի ուրիշը իր տանջանքների ու վշտերի մի հատիկ հանգստարանն համարում է ցուրտ ու խոնաւ չիրիմը, ուր պէտք է դադրին նրա ցաւերը և նա յաւիտենական անհունութեան մէջ պէտք է Կորչի, փոշիանոյ—դա յուսահատուած բանաստեղծն է: Մի երրորդը դրանց միջին ճանապարհն է բնուում կեանքի և մահուան նկատմամբ, սա գոն է իր վիճակից, հանդիսաւ և խաղաղ, թէեւ դժուարութիւններն ու բախտի անհամութիւնները սրա զլիսից եւս անպակաս են, բայց սա համբերութեամբ է տանում, կեանքի վրայ քաղցր աշքով է նայում և երբ անդառնալի օրհասը զլիսին կանգնի, նա չի սարսափի, չի սրանեղի, այլ խաղաղ ու անվըրդուով, ինչպէս ապրել էր, այնպէս էլ հոգին կը փչէ՝ թեւակուելով անյայութեան շնմքը:

Այս բանաստեղծներից իւրաքանչիւրի մահուան վրայ ունեցած հայեացքից երեւում է նրա հոգու ընդհանուր տրամադրութիւնն ու նրանց բանաստեղծական երկերի գունաւորումը, եթէ նայենք Պէտրկթաշլեանի այս կարգի ոտանաւորների վրայ, հեշտութեամբ կը տեսնենք, որ նա երրորդ կարգին է պատկանում: Այսուեղ եւս նրա քնարի ընդհանուր յատկութիւնը գերիշող է, Պէտրկթաշլեան, որ բաւական ազդու նկարագրել գի-

աէ արտպքին, դրսի աշխարհի երեւոյթները, որ իր բարեկամի մահուան առթիւ նշմարում է ծովի ու հովի ուղղն ու բաշականչում.

Առաջ, աւելք, ուզ առա ծով,  
Հինգը առնաց գործն հայիկ.  
Կերն կախ կը գչէ արտում—  
Խնչ լուր բերիր մեղի հայիկ.

որ տեսնում է երկնի անթիւ աստղերի անոյշ ցազակ լազը և սպաւոր սօխակի ազեկէզիկ հառաջանքները, որ թափանցում է ծովի խորքը և լուսմ է դիսախափ յաւերժանարաների սրտակուտոր լացը—այդ ռանուասեղծը չը գիտէ այզպիսի զրդող և ազգուրոպէին իր զգացմունքները զիջել, խոր վշտակցութիւն արտայայտել, նա միշտ չափաւը ու զազուած է:

Մահուան մասին ունեցած նրա զազափարը և օրհասի նկատմամբ յայտնած նրա մաքերը աւելի պարզ զգալի են իր մասին գրած տողերի մէջ: Մահուան անկողնում ընկած, մահկանացուին յատուկ մտածողութեամբ, նա սին ու փուչ է առուանում իր անցկացրած կեանքը.

Ազամբ մացէք. սկիեակ, անուրէք, լուսառեսիլ երեսիթք,  
Որ անգան բոյր և այնքան զարդ ամիք առորց իմ գեղազուք  
Սիրոն մոլորութիւնք, մեղքը անուշ և մահած։  
Արքցաւթիւն, որու զրկութեամբ ազետարեր է սրտի։

Նա այժմ զգում է, որ իր զուարթ ու ժպտուն կեանքը լոկ երեւոյթ էր, իսկականի կեղեւը, իսկականը նոր է սկսում նրա համար՝ զերեզմանի շեմքից, նա պատրաստ է արդէն խաղաղ և անդորր աւանդել իր հոգին, անվեհներ հոգով ընդառաջում է մահուան և սիրած հոգիսին խնդրում, որ չը մոռանայ իր զերեզմանը, նա Դուրեսանի նման համոզուած է, որ մահից յետոյ նա այլ եւս չի խարուելու:

Դիմեն լուշիկ ի գերեզման, ան հանգստոց զիս ոչ խարեւ։  
և ապա աւելացնում է.

Հանգեալց և ես զոհ, անտրտում, զէթ աստանոր չիմ անոքիկ։

«Գոհ, անտրտում» խօսքերը շատ բնորոշ են սրա համար, հանգիստ ապրել է, առանց մնամանն յոյզերի, առանց արտակարդ զեզումների և այժմ էլ զոհ և անտրտում հանգստանոց է զիմոււմ—Ապա մի նայենք Դուրեսանի մահամերձ գրած վերջին տողերին և իսկոյն պարզօրէն աչքի կ'ընկնի Պէշիկթաշլիանի առանձնայատկութիւնը։ Նա երիտասարդական բուռն կրակի բորբոքումն է, որ լաւայի նման զուրս է ժայթքում ոտուփ-զիլով բանաստեղծ Դուրեսանի հրարիսային կրծքից, դա խօսքի և մաքի գոռ բողոքն է, ըմբռատ ողին, որ մահուան անյուսութեան զի-

մաց ինքնամբուաց գրութեամբ կայծակներ է տեղում անյայտ էակի գլխին. դա վերջին ծայր յուսահատութեան հասած խռով վարար սրտի ազեկուուր, հոգեմաշ հառաչանքն է, զօրեղ բողոք, յափշտակուած սպառնալիք՝

Խոկ թէ կորընչի պիտի իմ հուսկ շունչ  
Հոս մառախովի մէջ համը անշշունչ,  
Արժմէն թող որ շանթ մը ըլլամ դալիկահար  
Պըշտուիմ անուանդ, մոնչեմ անդադար,  
Թող անէծք մըլլամ ու կողդ խրբեմ  
Թող լուջորջեմ քեզ ևնստուած ոխերիմ».

Խոկ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ լուռ ցաւեր ու լուռ գերեզման է խնդրում: Նա կրակոտ ու բուռն, սա հանգիստ ու մեղմ, նա բողոքաւոր ու ըմբոստ, սա գոհ ու համեստ. Նա հրաբուխ ու հեղեղ, սա պարզօրակ վճիտ վտակ: Մահը չի սարսեցնում սրան, սա Դուռեանի նման սարսափած չի հեծկլտում:

Ե՞նչ, երազ է վերջ գրկել ցուրտ շիրիմ...

Այլ կարծէք գլուխը կախ ձգած խոնարհ ու հեզ կերպով մրմբն-ջում է.

Հանգեայց և ես գոհ, անտրտում:

Ցանկալի էր իմանալ. թէ եղբայրութեան այդ հեղիկ երգիչը, որ երբեմն ասել է. «Ես լաւ կը համարեմ զրկուած ու չքաւոր մեսնել և իմ բարեկամաց յարգանքը հետո գերեզման տանել. քան թէ որ և իցէ ծանօթի վիրաւորական մի դէպք պատճառած լինեմ, —ինչպէս է մեռել, ինչպէս տարել մահուան տանջանքն ու ինչ մտքերով բաժանուել, ցրուել յաւիտենականութեան մէջ. ցանկալի էր տեսնել նրա անշուք շիրիմը գարնան ժամանակ, երբ ամբողջ բնութիւնը ձշտօրէն համապատասխանում է բանաստեղծի հոգուն և տրամադրութեանը, քանի որ երգչի հոգին ամբողջապէս մի գարուն էր: Անշուշտ գարնանը այդ անշուք շիրիմն աւելի ևս զարդարում է. սոխակի քնքոյց դայլայլիկները, ծիծեռնակի գեղգեղանքը, անոյշ հովիկի մեղմիկ սոսափիւնը, նոճիների թեթեւակի հովը, ծաղիկների բոյրը, — այդ բոլորն ի տես կ'երթան իրանց երգչին, բայց աւաղ, պակասում է ինքը, երգիչը, շրջակայ բնութեան շունչ ու լեզու տուողը: Բայց ոչ, նրա հոգին թոթուում է գերեզմանի շուրջը և շատերին գեռ պատմում է նրա սիրելի զեփիւոի տատանմանց, մշտամրմունչ սոխակի մեղմիկ քնքոյի, մեղբանոյշ թռչնակի դայլայլիկի միջով բանաստեղծի սիրող սրտի յաւոտ ու դարդոտ մարդու բազմամիտ պատմութիւնը: Նրա անունը չի սահմանափակւում անշուք շիրմի շրջանակի մէջ. դուրս է ե-

կել ու ծաւարւել և քանի հայերս պարագներ մեր անցնալով, քանի հետարբերութեար մեր զրականութեամբ, ոչնան ու եղի կը դդայնուի թէ Պէտքթաշլեանի և թէ շատերի անշայտ կամ թէ յայտնի անունն ու նշակը,

Սրանով մնեք վերջացնում ենք լլ. Պէտքթաշլեանի սասաւորների մէջ արտայայտուած զազափարների, զգացմունքների, նրա պօէզիայի առանձայնակութիւնների վերլուծումը, մնաց մտում է տեսնել, թէ Պէտքթաշլեան իր զգացմունքներն ու իր սրաի մնացմիկ տաղերը ինչպէս է արտայայտել, ինչ ծածկոթով է պարփակել, այլապէս ինչ արուեստ ու ճարտարութիւն անի, որպէս բանասանդ, որքան ներգաշնակ է նրա ուր, որքան սահուն լեզուն, որքան պարզ ոտանաւորը, որքան հարուստ ու բազմազան չափը:

## VI

Արտաքին ձեւի մասին ընդհանրապէս պէտք է ասել, որ Պէտքթաշլեան մեր արեւելանայ բոլոր բանաստեղծներից բարձր է իր բանաստեղծական արուեստով ու ճարտարութեամբ, իսկ արեւմտեան՝ պօլսահայ բանաստեղծների համար կարելի է ասել սովորական բան է վայելուչ ձև ու զրաւիչ արուեստ բանացնելը:

Պէտքթաշլեան, ինչպէս յայտնի է, զրել է թէ զրարար և թէ այխարհարար ոտանաւորներ և սխալ կը լինէր միայն աշխարհարար ոտանաւորների վրայ խօսել, իրրի Պէտքթաշլեանի տաղանդի բնորոշ արտայայտութիւնների վրայ, որովհետեւ վրատահ կարելի է պնդել, որ այդ ճկուն բանաստեղծը ազատորէն օգտաւելով զրարարի գանձերից, տուել է հին, կլասիկ լեզուով ոչ պակաս հմայիչ ու գեղեցիկ ոտանաւորներ Նրա «Գրիւեր», «Ինսարն ու Շիրիմը», «Գնացէր իմ տաղք»-ը, «Վերադարձ... զգացմունք արտայայտելու, ձեւի և եղանակի կողմից ոչնչով յետ չեն մտում «Աշունից», «Առ զեփիւն Ալէմտապիչ», «Ճենիք ի լեռն հսկային»... ոտանաւորներից»:

Մակայն իննդիրն այն է, որ Պէտքթաշլեան զուտ աշխարհարար, իրանց զրական մաքուր բարբառով ոչ մի ոտանաւոր չունի նա այնքան ընտելացել է զրարարին, նրա միտքն ու զրիչը զրարարի վրայ այնքան վարժուել ու աշխատել են, որ առանց մի չնշն դժուարութեան նա զրում է հնացած լեզուով ամենայն հեշտութեամբ սիրուն ոտանաւորներ և իր աշխարհարար զեղեցկագոյն երկերի մէջ խառնում է զրարար տողեր:

Պէշիկթաշլեանի լեզուն խայտաճամուկ է այդ կողմից, բայց շատ հարուստ ու ծկուն: Նա գիտէ ճարպիկութեամբ օգտուել լեզուից և ընթերցողի պաշար դարձնել շատ բառեր:

Պէշիկթաշլեանի քերականութիւնն համարեա բացառապէս գրաբարի վրայ է յենուած, չափուած ու ձեւած. խոնարհումներն ու հոլովումները բազմից գրաբարի ձեւով են կատարւում, ածականների և գոյականների դասաւորութիւնը, ոչ սովորական ենթականների և զրանց ստորոգեանների յարաբերութիւնները, նախդիրներով գոյականները—ամբողջապէս գրաբարի տարագն են հագել: Յերենք մի տուն, որի մէջ կարել է տեսնել մեր վերոյիշեալ ասածները.

Հուր հեր արփուն կըծաւալի  
Ի դաշոյ յարօտ գեղաժըլիոտ.  
Ծովըն ի լերկինըս կըզմալիի  
Երկինք ի ծով ծիծաղախիտ.  
Բացէք հաճուք փափուկ թեեր  
Տարէք զմեզ բըլուրն ի վեր:

Պէշիկթաշլեանի ոտանաւորն ազատ է խրթին, դժուարի-մանալի և մութ դարձուածքներից, բանաստեղծական ոլոր մոլոր, մանուածապատ. ըրջումներից: Խնչ վերաբերում է չափին և բանաստեղծական արուեստին, պէտք է ասել, որ առ վարպետ է բառիս իսկական իմաստով: Նա կարողանում է տեղն եկած պահին զգացմունքին պատեհ չափ գտնել և բազմազան չափն ու ոտերի, բանաստեղծական նախադասութիւնների կանոնաւոր երածչտական անդամահատութիւնը միանալով լեզուի ճնշութեան ու իմաստի, զգացմունքի վայելչութեան հետ—ունկնդրի լսելիքն են պարարում իրանց քնքոյշ և սահուն ներգանակութեամբ, չափաւոր ու արուեստաւոր ոիթմերով, լի և հնչունաւոր յանգերով:

Եթէ ուրախ զրօսանքի, բաւականութեան ու վայելքի զգացումն է արտայայտել յանկանում, կամ սրտի խոր ծալքերի սիրային տենչերն ու յոյզերն անհունութեան զիրկը նետել—զրում է թեթեւ ու սահուն, կարճ և կոկիկ տողեր:

Եթէ մահուան ստուերների ազգեցութեան տակ կամ նըրանց ժանդ գերանդուն ուղղած տողեր է զրում—զուրս են գալիս թունդ վիստական, երկայն ու հանգիստ, միապաղաղ, հաւասար չափեր: Եթէ երևիանների հետ է խօսում, մէջ է բերում թոթուն, շարժուն, կենդանի և խայտաբղէտ շարքեր. և տմբն անդամ այդպէս գրուած իւրաքանչիւր ստանաւորի մէջ զգացմունքն ու տաղաչափութիւնը միապահնուելով տալիս են զօրեղ ներդաշնակութիւն և զրանց հետ միանալով ընտրովի և

Հայինայարմար բառեր՝ առաջ են բերում երրեմեսպէս ուղղուիք երաժշտութիւն, մուզիկա:

Կարգացէք, որինակի համար, «ձեզը ի լեռնան հակացին» կամ «Առ Գոհարիկ» կամ «Երդ առ մասկին».

Արք որ թաշոն ճշանառոց  
Արք որ վասեակ կը լոկը շոտոց...

Ակու ուշուիկ, եկու բըշուիկ  
Աւ կը դառաս, ինչու մընդիկ  
Վախ իմ աղջիկ վախ բըշուրդիկ  
Առ մէկ պայիկ, կեցիր լըսիկ:

Գէշիկթաշլեան զիտէ բազմազան շափ գործածել սկսած հայկական 16 զանկանի շարս հատածով շափից մինչև 5—6 զանկանի ստանաւորները: Սակայն որա տաղերի մէջ տիրոզ և արտայայտիչ չափն է 8 զանկանի ստանաւորը, ինչպէս և երգերի մէջ՝ 7 զանկանին:

Տաղաչափական հաշիւների մէջ Գէշիկթաշլեան հմուտ է: Թիշ կը գանձէք նրա տաղերի մէջ այնպիսի տներ, որոնց մէջ շափն ու հատածները, շեշտի աեղն ու ցէղուրայի բաժանումները խանգարուած լինեն: Տաղաչափութեան, արուեստի կողմից մնացանում խիստ հազուագիւտ են այսպիսի տողեր.

Ի բիւր ձալնից բնութեան չքեղ  
Թէ երդ թաշին սիրազարար.  
Մասունք կուսին ամենազեզ  
Թէ որ զարնին փափակ քընար.  
Հունին մի ձալն ալնքան սիրուն,  
Գան զանձկալի եղրար անսն:

Յանգերի որպիսութեան և զասաւորութեան կողմից ևս Պիշիկթաշլեանի ստանաւորն աշքի ընկնոց է: Յանգերի զօրեցութիւնն ու շեշտը առանձին ոյժ են տալիս խօսքին ու արպաւորիչ գարնում թէ մարի, յիշողութեան և թէ լսողութեան փայելչութեան համար:

Այնպիսի լիանչիւն յանգեր, ինչպիսիներն են.

զասաւորիկը	հրեշտակի	արտասուր
աշակերտ	շեշտակի	արտամասուր
մանեւշակին	զեփիւս	տեսարան
ցոլազին	բափիւս	զրասորան

Կամ այսպիսի տներ՝

Քու սիրասուրի կորիչ Արտակ  
Տիուր երգեց, ո՞հ ալս դիշեր.  
Աէրն էր երգոց իր նըստանկ  
Բալց թորգումայ դաղեսոն լիշեր:

Հազուագիւտ չեն Պէշիկթաշլեանի տաղեւոի մէջ:

Բանաստեղծի գործածած պատկերների\*) մէջ, յաճախ պատահում են նմանութիւններ՝ մեծ մասամբ բնութիւնից վերդրած և հոգմերական համեմատութիւնների բնաւորութիւն և կրում. այսինքն նմանութեան առաջին մասը համարեա նոյն քան և աւելի շատ երկար է, քան երկրորդը և այդ՝ առաւելապէս երկար տողերի մէջ.

Վերջացնելով մեր խօսքը, մեզ մնում է ցանկալ, որ մեր սուսահայ բանաստեղծները, որոնք երբեմն զաղափարի կողմից շատ առաջ են, մի փոքր ուշը դարձնէին բանաստեղծական արուեստի վրայ, ուսումնասիրէին նաև ստանաւորի արտաքին հանդամանքները և մշակէին իրանց լեզուն, ոճը և իմանալին ամեն բան տեղին գործ ածել, ինչպէս այդ անում էր Պէշիկթաշլեան:

Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

\*) Պէշիկթաշլեանի պատկերաւորութիւնը աշխատել ենք ներկայ ուսումնասիրութեան մէջ զողընթացարար դուրս բերելու